



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԵՄԱՍԿԻՐ
ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 26 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ II

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագույն մտածողներ

ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ.— (Գ.) Հոգի եւ նիւթ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐԸ.— Համապատում եւ իր նախաբանը

Մարիամի արցունքները (քերթուած)

Համագումարի թերութիւնները

ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ.— Քննադատութիւն Տ. Մուշեղ եպ.ի

հայրանուն քերթին

Կարեւոր հարցում մը

ՏԻԱՔԱՍՆԵՐՈՆ զինուորագրութիւնը

Լուսաբանութիւն մը

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ.— Շաբթուան լուրերը

ԶԱՐԾԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԼԷՈՆ ՏԸՆԻ

Մ. ԱՐՔԵՊ. ՕՐԽԱՆԵԱՆ

ԽՈՒՆԿ-ԱՂՕԹ

ԴԱԶՐԻԿ

ՀՄԱՅԵԱՀ ՔՀ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎ ԵՒԴՈԿԻՈՅ

ԻՐ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՃԵՄԱՐՏԱԽՈՅՉ

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Արշրան-Հարստ Մոշա-Թաշը, Թիւ 18

Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արսասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պարակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄՆԵՐ ԴԻԻՐԱՄՍՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ» ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է զիմեւ առ Զարմայր Բանանայ կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كلئسانند « داجار » غزنى مديرى پاپاس زارماير افندى

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ-
ղոս Վրդ. Դաթթեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեգլին Բհնյ. Պողար-
եան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէիեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպօ.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՂՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՋՆԿԱ. — Տ. Մեարոպ Բհնյ. Թորոսեան
ՋՄԻԻՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Դալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մարոն էֆ. Թորոսեան
ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐՍԾ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՋՈՒՍՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրժ-
նիկեան
ԹՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Մ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապաչեան
ՍԵՐԱՍՏԻՍ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուսմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻՋ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բհնյ. Բիպաթեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 26 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ II

ԲԱՐԵՊԱՅՏ ՄՏԱԾՈՒՄՆԵ՝

Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք
Անտուժոյ կոչեցին: (Մատթ. Ե. 9.)

Եթէ մատուցանիցես զպատարագ քո
ի վերայ սեղանոյն, եւ անդ յիշեցես եթէ
եղբայր քո ունիցի ինչ խէժ զբէն,
Թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն,
եւ երթ նախ հաշտեաց ընդ եղբոր քում,
եւ ապա եկեալ մատուցիր զպատարագն
քո: (Մատթ. Ե. 23-24)

Սիրեցես զընկեր քո իբրեւ զանձն
քո: (Մատթ. ԻԲ. 39)

Բարեպաշտիկ ոգեւորութեան օրե-
րու մէջ կ'ապրի Հայ Ժողովուրդը: Եկե-
ղեցին երեսն առաւել քան երբեք լեցուն են
հաւատաւորներով: Մեծ Պահքը, մա-
նաւանդ Միջինքէն ետքը, ներշնչող
շրջան մըն է Բրիստոնեային համար,—
գոնէ այդպէս կը ցուցնեն երեւոյթ-
ները— ինքնամոփոփ կեանքով մը ապ-
րելու: Վայրկեանը նպաստաւոր է, ջեր-
մեռանդ ընթերցողին հետ խորհելու
մեր հոգեկան, ներքին կեանքի պա-
հանջներուն վրայ:

Գաղափարային բարեջան առաջնորդը,
իր այնքան հիւսիսեղ ու գործնական
գործընթացներու շարքովը, խօսեցաւ մե-

զի երջանիկ կեանքին, զոգումի կեանքին,
աղօթի կեանքին ու դրամի կեանքին վը-
րայ: Նուազ կարողութեամբ, բայց
հաւասար եռանդով ու խորունկ հա-
մոզումով պիտի ուզեմ խօսիլ սիրոյ
կեանքին, հաշտ եւ խաղաղ կեանքին
վրայ:

Յիսուսի երեք խօսքերը, որոնք կ'ե-
րեւան գրութեանս վերեւը, կը պար-
զեն նպատակն ուր կ'ուզեմ ձգտիլ:

Բրիստոնեայ՝ եղբայրներ, ունի՞նք
սիրոյ կեանքը մեր հոգեկան ներքնաշ-
խարհին մէջ: Ունինդրելով Մեծ Պահ-
քի կիրակի օրերուն Հայ Եկեղեցւոյ Մ.
Հայրապետներուն կողմէ այնքան ի-
մաստութեամբ կարգադրուած Աւետա-
րանական եւ Հին ու Նոր Ուխտի Մ.
Գրական ընթերցումներուն, վրդովում
մը, խռովք մը չենք զգար ներքնա-
պէս, ի լուր ահաւոր վայերուն, զոր Աս-
տուածամարդը կ'ուղղէ ըզրոր փարի-
սեցիներուն եւ դպիրներուն, որոնք բա-
րեպաշտի կեղծաւոր արտաքին երե-
ւոյթի մը տակ կը ծածկեն աղտեղու-
թիւնները մուկեկան կիրքերուն: Աս-
տուծոյ սեղանին առջեւ ծնրադիր,
գլխահակ, մեր մեղայն աղաղակներուն
տակ, որ մեր շրթունքէն կը թռնու-

իրչ ռխակալութիւններ ունինք արդեօք որոնք՝ թողուած մեր սրտին խորը՝ ամո՛ւր կը մնան հոն, առաջին առթիւ բորբոքելու, ժայթքելու կազմ եւ պատրաստ:

Տխուր է քահանային դերը, երբ ամէն վայրկեան անհատական - ընտանեկան կեանքի մէջ առիթը կ'ունենայ տեսնելու ռխակալութեան, աստելութեան կիրքերուն գործած աւերները, կիրքեր՝ որոնք կեղծաւորի ոսկեզօծումով մը կը պարօղուին, եւ այդ պատճառով աւելի՛ վտանգաւոր կը դառնան:

Հայրե՛ր, մայրե՛ր ու զաւակներ, ամուսիններ, եղբայրներ ու քոյրեր. ձեր ամենօրեայ կեանքին մէջ չէ՞ պատահած որ անդգուշութեամբ, ակամայ, եւ թերեւս կամաւ, վշտացուցած ըլլաք ձեր մերձաւորը: Գործուած թեթեւ յանցանքի մը համար արտասանուած ծանր խօսք մը, կատարուած բիրտ շարժում մը գիտէ՞ք թէ ո՛րքան խորհունկ կ'ազդեն վշտացեալ սրտի մը: Չէ՞ եղած որ ձեր եղբօր հետ չընչին պատճառի մը համար ունեցած անհաճոյ միջադէպէ մը ետքը, ցուրտ անտարբերութեամբ մը պատասխանէք անոր բարեւին, կամ բնաւ չպատասխանէք. չէ՞ պատահած որ ձեր մէկ մտերմին անհրաժեշտ օգնութիւն մը զլացած ըլլաք, պարզապէս անոր համար որ պզտիկ թերութիւն մը գործած է ձեզի դէմ: Պզտիկ պատճառները ո՛րքան մեծ արդիւնքներ կ'ունենան յաճախ: Աւա՛ղ, ընտանեկան ու ընկերային մեծագոյն աստելութիւնները շատ փոքր շարժառիթներ ունեցած են. — Սխալ իմացուած արժանապատուութիւն մը, լաւ եւս թիւրիմացութիւններու շարք մը, որոնք չեն ուղղուիր, չեն ճշտուիր, որովհետեւ ոչ մէկ կողմը կը զիջանի առաջին շարժումն ընել իր եղբօրը հաշտութեան ձեռք կարկառելու:

Ո՛րքան ամուսնական միութիւններ թշուառութեան բոյն դարձած են, ո՛րքան ընտանիքներ քայքայուած՝ այդ կարգի չուլին թիւրիմացութիւններու հետեւանօք:

Եւ մենք կ'երթանք եկեղեցի, կ'աղօթենք, կը խոստովանինք, կ'ապաշխարենք, կը հաղորդուինք նոյն իսկ, առանց յիշելու Յիսուսի խօսքը. — Նախ հաշտուե՛ք որդի հետ:

Անդրադարձած ենք՝ ոսկայն՝ թէ առանց այդ հաշտութեան վսեմ շարժումին, բացարձակ կեղծաւորութիւն մը պիտի նկատէ Աստուած մեր պահքը, մեր աղօթքը, մեր ողորմութիւնը: Առանց այդ զոհողութեան, որ սխալ հասկցուած արժանապատուութեան մը վսեմ զոհողութիւնը պիտի ըլլար, Յիսուսի բոլոր պատուիրաններուն կատարումը պիտի կորսնցնէր իր ամենաբարձր նշանակութիւնը:

Եթէ ճշմարիտ Քրիստոնեաներ ենք, եթէ կ'ուզենք հաշտ ապրիլ մեր խնդճ մըտանքին հետ, սերտ հաղորդակցութեան մէջ գանուիլ Տիեզերքի Արարչին հետ, եւ վստահ ըլլալ անոր անհուն ներողամտութեան վրայ, պէտք է անդրադառնանք մեծ պատուէրին. — Սիրե՛ք ընկերդ քու անձիդ պէս: Գնա՛, նախ եղբօրդ հետ հաշտուե՛ք:

Անշուշտ եղբայր մենք չպիտի հասկընանք իր սեղմ իմաստով, այլ ամբողջ մարդկութիւնը. դոյ՛ս ամենեւեմ եղբարք հի: Մարդոց մէջ ամէնէն պըզտիկ նկատուածը սիրտ ունի, զգացում ունի, եւ անոր հանդէպ եղած անիրաւութիւն մը, արհամարհոտ շարժում մը՝ արհամարհանք մըն է մեր հասարակաց Հօրը, որ երկինքն է, որ կը հրամայէ քողոյ մետոց պարսպասնաց: Եւ ոչ միայն թողուլ, այլ եւ սիրել զայն, անձնուէր ըլլալ անոր, ի նկատ ունենալ մարդոց մէջ գտնուած բարի

զգացումները, եւ բարիով յաղթել չարին:

Ասիկա ճշմարտութիւն է անհատական, ընտանեկան կեանքի մէջ, ճշմարտութիւն է նաեւ հանրային կեանքին մէջ: Եթէ լուր մեր կիրքը, եթէ գագրէին անձնական նեղ հաշիւներէ առաջ եկած հակառակութիւնները, եթէ՝ գաղափարի օրինաւոր եւ փափաքելի պայքարէն դուրս՝ չգտնուէին ուրիշ խուլ պայքարներ, գձուճ անխոստովանելի շարժառիթներէ առաջ եկած, որքան կերպարանափոխ եղած պիտի տեսնէինք մեր հանրային կեանքը՝ փոխադարձ անկեղծութեան, փոխադարձ ներողութեան, բայց նաեւ փոխադարձ արդարութեան եւ ճշմարտութեան վրայ հիմնուած: Յիսուսի քարոզած սէրը, խաղաղութիւնը պիտի տիրէր ամէն դասակարգի մէջ: Միտքերը հանդարտ, սիրտերն անխռով, հոգիներն անվրդով, խղճմտանքը մաքուր, խաղաղ, անձնիւր ոք պիտի զգար այն անուշ երանութիւնը որ երկնքի թաղաւորութիւնն է:

Քրիստոնեաներ, Յիսուսի կեանքին վսեմ վայրկեաններուն յիշատակը մօտ է պարզուելու մեր կոյր աչքերուն առջեւ: Աշխարհի վսեմագոյն, իտեալ կրօնքով սրտապնդուած, այդ կրօնքի հիմնադրին անձնազոհութեան գերագոյն օրինակը պէտք է ազգէ մեր սրտին: Սիրալիր եւ հաշտ՝ մեր ընկերին հետ, խաղաղութիւնն ու սէրը պէտք է տիրապետէր մեր մէջ: Այդ պէտք է ըլլար մեր ներքին կեանքին հիմը, մեր հանրային կեանքին խարխիւը՝ միակ միջոց մը կատարեալ երջանկութեան, այս կեանքին ու յաւիտենականութեան մէջ: Յիսուս իր երանիններուն մէջ մեծագոյն վարձատրութիւնը կը խոստանայ խաղաղարարներուն: Անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին, կը գոչէ:

Խաղաղութիւն կը մաղթէ եկեղեցին ամէն օր, ամէնո՛ւն. խաղաղութիւն ամէն տեղ ու ամէն ժամանակ. խաղաղութիւն, մասնաւորապէս, Յիսուսի իտեալ կրօնքին ամենէն նուիրական շաբթուն, յորում Աստուածամարդը սիրոյ, անձնուիրութեան իտեալ օրինակը, զոհողութեան վսեմ հաճութեամբ ըմբռնելու թելադրող առիթը կը ներկայացնէ հաւատացեալին:

ՁԱՐՄԱՅՐ ՔԱՆԱՆՅՈՒՆ

ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Գ.

ՀՈԳԻ ԵՒ ՆԻՒԹ

Առանց պատճառի արդիւնք չըլլար. ոչինչէն բան մը առաջ չի գար: Ասոնք առածներ են, այսինքն անժխտելի ճշմարտութիւններ:

Արդ, որովհետեւ մեր իւրաքանչիւրին մէջ կը հաստատուի ոյժերու, կարողութիւններու գոյութիւնը, որոնք նիւթեղէն չեն կրնար նկատուիլ, անոնց պատճառը բացատրելու համար անհրաժեշտ է դիմել տարբեր աղբիւրի մը, այն աղբիւրը զոր կը կոչենք հոգի:

Երբ, մեր խորն իջնելով, ուզենք սորվիլ, ինքզինքնիս ճանչնալ եւ վերլուծել մեր կարողութիւնները. երբ վերցնենք մեր հոգիէն այն փրփուրը՝ զոր կեանքը կուտակած է հոն, — թանձր ծածկոցը՝ որու նախապաշարումները, մոլորումները, իմաստականութիւնները պատած են մեր իմացականութիւնը, — եւ մեր էութեան ամէնէն ներքին ծալքերուն թափանցենք, մենք ըզմեզ գէմառ գէմ կը գտնենք այն բարձր սկզբունքներուն, առանց որոնց չկայ մեծութիւն մարդկութեան համար. — բարւոյն սէրը, արդարութեան եւ յառաջդիմութեան զգացումը: Սոյն սկզբունքները՝ որոնք զանազան աստիճաններով կը գլտնուին այնքան տգէտին որքան հանձարեղ մարդուն քով, չեն կրնար առաջ գալ նիւթէն, որ զուրկ է այդպիսի յատկութիւններէ: Ու նիւթն երբ չունի սոյն յատկութիւն-

ները, ինչպէս պիտի կրնար յօրինել առանձինն էակներ, որոնք անոնցմով օժտուած են:

Գեղեցկին և ճշմարտին զգացումը, ըսքանչացումը՝ զոր կը զգանք մեծ և ազնիւ գործերու համար, մեր անդամներու մէկն և մեր երակներու արիւնէն տարբեր ծագում մը պիտի կրնային ունենալ:

Անոնք կը նմանին աւելի ցոլքերուն, բարձր ու մաքուր լոյսի մը, որ կը փայլի մեր իւրաքանչիւրին մէջ, ինչպէս արեւը կը ցոլայ ջուրերու վրայ, թէպէտ այդ ջուրերն ըլլան պղտոր կամ յստակ:

Ի գո՛ւր մարդ պիտի պնդէր թէ ամէն ինչ նիւթ է:

Ի՛նչ, սիրոյ և բարութեան բուռն թափ մը զգանք, սիրենք առաքինութիւնը, անձնութիւնը, դիւցազնութիւնը, բարոյական գեղեցկութեան զգացումը քանդակուած ըլլալ մեր մէջ, իրերու և օրէնքներու ներդաշնակութիւնը մեզ թափանցէ, զմեզ դիւթէ՛, ու պս ամէնէն ո՛չ մէկ բան չգանազանէ զմեզ նիւթէն:

Զգանք, սիրենք, խիղճ, կամք, միտք ունենանք և առաջ գանք պատճառէ մը, որ չունի սոյն յատկութիւնները, ո՛չ մէկ աստիճանով. պատճառէ մը՝ որ չ'զգար, չի սիրեր, որ ոչինչ կը ճանչնայ, կոյր և համր է:

Կարելի՞ էր որ աւելի բարձր, աւելի կատարեալ, լաւագոյն ըլլայինք քան այն ոյժը, որ զմեզ արտադրած է:

Այդպիսի կարծիք մը քննութիւն չի վերցնէր: Մարդ իր մարմնով, գործարաններով առաջ կուգայ նիւթէն, իմացական և բարոյական կարողութիւններով առաջ կուգայ հոգիէն:

Այլ աւելի ճշգրտէն ըսենք մարդկային մարմնի նկատմամբ թէ, սոյն հիմնալի մեքենան կազմող գործարանները կը նմանին այն անիւներուն, որոնք անկարող են գործել առանց շարժիչ ոյժի մը, առանց կամքի մը՝ զանոնք շարժման մէջ դնող:

Հոգին է այդ շարժիչ ոյժը: Հոգին կը բնակի նիւթին մէջ, ինչպէս բանտական մը՝ իր մենտիւնցին մէջ: Զգայարանքներն այն բացուածքներն են, որոնցմով ան կը հաղորդակցի արտաքին աշխարհի հետ:

Մարմինը մուրացածոյ հագուստ մըն է լոկ, վաղանցիկ ձև մը, շուտով կազմալուծուելու ենթակայ, հոգին կ'ապրի շիրմէն անդին. յաւիտենական, անմահ է ան: Հոգեկան կեանքը՝ կանոնաւոր, ճշմարիտ, անվախճան կեանքն է:

ԼԷՈՆ ՏԸՆԻ Թարգմ. Ա. ՀՕԼԱՍՍԱՐԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Օրմանեան Սրբազանի վերջին հրահարակոթիւնը՝ Համապատմ. եկեղեցականութե առջ խարիական բարեպաշտ եւ միեւնոյն ատեն ուսանելու, ճշմարտութիւնը փնտռելու հետամուտ միտքերու համար ամէնէն այժմեական հրատարակութիւնն է սա միջոցին, երբ Աղուհացից, ասպաշխարութեան օրերուն մէջ ճշմարիտ քրիստոնեան պարտաւոր է առաւելագոյն հոգեկան կեանքով մը ապրելու. ուստի շահեկան կը նկատենք արտագրել այդ հիմնալից եւ զգաւաւոր գործին նախաբանը, ուր ամփոփ տողերու մէջ կը պարզուի Աւետարանի փրկարար դերը՝ մարդկային կեանքի ազատագրութեան մէջ, միեւնոյն ատեն բացատրուելով նոյն ստուար գործին մեթոտն եւ ուղղութիւնը:

Ն Ա Խ Ս Ռ Ա Ն

ԱՒԵՏԱՐԱՆԸ այն դիրքն է, ուսկից աւելի բարձր մոտաորական արտադրութիւն մը ի լոյս եկած չէ աշխարհիս վրայ:

Այդ բանը կրնանք համարձակ հռչակել, ոչ միայն իբրեւ ճշմարիտ քրիստոնեայ, անոր մէջ տեսնելով աստուածային ներշնչումով պատրաստուած գիրք մը, այլեւ իբրեւ անկախ գիտող մը, քննելով եւ զննելով անոր յառաջ բերած արդիւնքը եւ անոր անչիջանելի կենդանութիւնը:

Մարդկութեան ամենամեծ յեղափոխութիւնը Բրիտանի անուանին հետ կապուած է: Բրիտանիութեան կը պարտաւորաւորուէր ինչ որ իբր մարդկային ինքնագիտակցութեան, ազատագրութեան, արժանապատուութեան, եղբայրակցութեան եւ զարգացուն յառաջդիմութեան անուաներու ներքեւ ստացած է, եւ իրեն պարծանքի եւ վայելքի կէտեր ըրած է. իսկ

Քրիստոնէութեանը իրեն սկզբունքները Աւետարանէն քաղած է, իր կանոնները Աւետարանով է կազմած, իր ճանպարհ Աւետարանով է գծած, իր ոյժը Աւետարանով է ունեցած:

Աւետարանը եղած է լուսաւոր արեւ մը, որ իւր լոյսը ամէն կողմ տարածած է, իւր ճառագայթներով ցնցած ու ողբերգած է ամէնքը, ոչ միայն անոնք՝ որ սիրալոյզոր հպատակութեամբ ընդունած են անոր պատգամները, այլ նաեւ անոնք՝ որ անկէ հեռու մնացած ըլլալ կը կարծեն, բայց գործով եւ արդեամբ անոր նմանողութեան ճանպարհ են բռնած, եւ անով միայն փրկեց կացութիւնը բարձրացնել կը յաջողին:

Աւետարանին անուրանալի արդիւնքներուն չափ քացայայտ է անոր անշիջանելի կենդանութիւնը: Աւետարանն ունեցած է եւ ունի իւր ռեսուրս հակառակորդները, և ինչ որ վերջին դարերու քննադատները կը գրեն, արդէն առաջին դարերու քննադատներէն գրուած են, եւ դարէ դուր շարունակած են: Բայց այդ անընդհատ պայքարը չէ կրցած նուազել Աւետարանին յարգը, չէ կասեցուցած անոր ընդունելութիւնը, չէ տկարացուցած անոր ոյժը, չէ կրցած խախտել անոր անսասանելի պատգամները: Աւետարանը այն է այսօր, ինչ որ էր իւր սկզբնաւորութեան ատեն, ամէնուն ցանկալի եւ ամէնուն սիրալի գիրքը:

Այդ անզուգական տոկունութեան գաղտնիքը եւսքանգեւս հիմնալի կը դառնայ, երբոր գիտենք որ անոր ոյժը ոչ իմաստասիրական նրբութիւններէ եւ ոչ հոգեւորական ճարտարութիւններէ յառաջ կու գայ, ոչ գիտական մակածութիւններէ եւ ոչ արուեստական առաւելութիւններէ կը բղիւի: Այլ նորաստեղծ ներքին օծութենէ մը, որ միտքը կը պարարէ եւ սիրտը կը գրաւէ, հոգին կը հանգչեցնէ եւ կամբը կը զօրացնէ: Նոյն իսկ անոր անարուեստ, թող ներուի մեզ այս յանդուգն բացատրութիւնը, անոր անարուեստ կազմութենէն դուրս կը բղիւի չոր մը որ կը լուսաւորէ, ցուր մը որ կը ցնցէ, չունչ

մը որ կ'ողբերէ, ոյժ մը որ կը մղէ:

Աւետարանի հաւատարապէս հակառակորդներ եղած են, թէ անոնք, որ զայն իրենց իմաստասիրական, չըսենք իմաստական, ձեւակերպութեանց ենթարկելով, բծախնդիրներ քննադատութեան կէտեր կարծած են գտնել, եւ թէ անոնք որ զայն արուեստական եղբակացութեան ենթարկելով, ուզած են անոր ըսել տալ, ինչ որ Աւետարանը ըսել ուզած չէ:

Աւետարանը իւր պարզ ինքնութեան մէջ առնուած ատեն, եւ առանց հակառակաշունչ կամ նախապաշարեալ ըմբռնումներու կարգացուած ատեն, անսխալ ու զեցոյց մըն է հաւատացեալին՝ իւր գերբնական խորհուրդներով: Բարոյախօսին իւր անստերիւր պատուէրներով, կենցաղագէտին՝ իւր ուղիղ սկզբունքներով, յաջողութեան մէջ՝ իւր խոհական խրատներով, ձախորդութեան մէջ՝ իւր սրտապշտողիչ մխիթարութիւններով:

Այդ խորարմատ սկզբունքն է, որ մեր ամէնուն սիրելի ըրած է Աւետարանի ընթերցումն եւ դասումնասիրութիւնը, գործնականապէս ալ գիտնալով անոր բարեյաջող արգասիքը, եւ փորձադապէս ալ զգալով միեւնոյն արդիւնքը: Ազգերու ընդհանուր բարոյականին տեսակէտէն ալ չտեսնուիր միթէ՞, որ լաւագոյն քաղցրականի աէր ճանչցուած են այն ազգերը, որոնց մէջ աւելի ընտելացած է Աւետարանի ընթերցումը: Մեր ազգային պատմութիւնն ալ չվկայեր միթէ՞, որ մեր քաջալը Նահատակներ եւ քաջասիրտ կիներ, Ժիրաթիր իրիաւասարդներ եւ աստուածավախ ժողովրդականներ, Աւետարան ձեռունքին կը զօրանային ճակատամարտներու մէջ, կ'ողբերուէին հալածանքներու հանդէպ, եւ գործունէութեան կը յորդորուէին զրկանքներու ներքեւ:

Այդ համոզմամբ առաջնորդուած եմ ես ալ, թէ՛ իրեւ քարոզիչ վարդապետ եւ թէ՛ իրեւ կրօնու սոյց դասատու: Սիրած եմ Աւետարանով քալել թէ խրատաբանութեանց եւ թէ դասաւանդութեանց մէջ, ինչպէս լաւ պիտի յիշեն մայրաքա-

ղաքի ու գաւառներու ունկնդիրներս, եւ ձեմարանի ու Դպրեւանքի ու Կեդրոնականի աշակերտներս: Այդ ուղղութեան հետեւանքը պիտի ըլլար, գրութեամբ ալ տեւողական ընել նոյն մեծ փափաքը, որ է ընտելացնել եւ սիրցնել մեր ազգայիններուն՝ Աւետարանն ու իր պարունակութիւնը: Արդէն բազմազարդ օրերուս մէջ ձեռնարկած էի այդ աշխատութեան Լոյս կրօնաթերթի պրակներուն մէջ, որուն շարունակութիւնը պահ մը Առեւելք օրաթերթի մէջ ալ տեսնուեցաւ. բայց անոնք անցողակի ձեւ ունէին, եւ պէտք էր մնայուն հատորով մը առձեռն պատրաստ ընծայել ձեռնարկեալ գործը: Առ այս ուղեցի օգտակար ընել պաշտօնական զբաղումներէ ստացած ազատութիւնս, վերաքննելով ինչ որ պարբերականներու մէջ հրատարակած էի. եւ լրացնելով ինչ որ տակաւին կը պակսէր գործին ամբողջութեան, որ եւ ոչ իսկ կէս էր եղած:

Այս է Համապատումիս նպատակը, եւ այսպէս սկսան անոր պատրաստութեան պարագաները:

Աւետարանի ուսումնասիրութեամբ զբաղողներ, զանազան եւ բազմազան ուղղութիւններ եւ նպատակներ ունեցած են:

Որովհետեւ եղած են այնպիսիներ, որ արուեստակեալ ձեւերով ջանացած են Աւետարաններուն դէմ մաքառիլ, եւ անոնց մէջ դիտական կամ հմտական թերութիւններ, եւ նոյն իսկ ուղիղ մտաց հակառակ տեսութիւններ որոնել, պէտք եղած է որ ուրիշներ ալ ջատագովական դեր ստանձնեն, եւ Աւետարաններու պաշտպանութեան համար դրեն:

Նոյնպէս եղած են քննադատներ, որոնք Աւետարաններուն ծագումը, յօրինումը, խմբագրութիւնը, ժամանակը, հեղինակները, եւ ուրիշ նմանօրինակ կէտերը հետազոտութեանց առարկայ ընելով, մինչեւ իսկ անոնց վաւերականութեան վրայ կասկածներ յարուցած են. այս պատճառով պէտք եղած է, որ այդ առարկութիւնները ցրելու համար քննադանական ուսումնասիրութիւններ կատարուին, եւ

յատուկ աշխատութիւններ հրատարակուին:

Միւս կողմէ զաւանթառական խրնդիրներով զբաղողներ, ձեռնարկած են Աւետարաններուն բառերն ու տառերը վերլուծելով, անոնց մէջէն կամայական սկզբունքներ քաղել եւ հաւատոյ կէտեր կազմել, եւ Քրիստոսի Եկեղեցւոյն պատակաւ մտերուն պատճառ հանդիսացնել նոյն իսկ Աւետարանը: Այսպիսիներուն դէմ ալ պէտք եղած է անկողմնակալ հոգւով Աւետարաններուն պարունակութիւնը ուսումնասիրել, եւ առանց բարդելու եւ առանց զեղչելու, անոնց պարունակած վարդապետութիւնը մէջ տեղ դնել, ինչ որ խղճամբօ զաւանթառներու յափկացուած ճիւղ մըն է:

Համապատումիս ստանձնած դերը ոչ ջատագովականն է, ոչ քննադանականը, ոչ զաւանթառականը. որովհետեւ ոչ Քրիստոնէութեան դէմ մաքառողներու եւ ոչ Աւետարաններուն յարգն ուրացողներու ուղղուած է այս հատորը: Հայաստանիայց Ուղղափառ Եկեղեցւոյ հաւատացելոց համար է սոյն աշխատասիրութիւնը, որոնք Աւետարանը սիրող նախնեաց սերունդ են, եւ Աւետարանի առողջ սկզբունքներուն հետեւողներ են: Բայց եւ միանգամայն չորս Աւետարանները ձեռուրին առած ատեն, իրենց արդար հետաքրքրութիւնը զբոսող կէտեր դիմացնին կը գտնեն:

Չորս Աւետարաններէն իւրաքանչիւրը իրարմէ անկախ ընթացք մը ցոյց կու տայ, Ուրեմն պէտք կը զգան իրարու կապակցելով ամբողջի մը զաղափարը ունենալ:

Չորս Աւետարաններէն վերջինը շատ աւելի զգալի սարբերութիւններ կը պարունակէ, առաջին երեքներուն հետ բաղդատուած ատեն: Ուստի փափաք կ'ունենան այդ մասին լուսաբանուիլ:

Աւետարաններուն մէջ մերթ մերթ բառերու եւ բացատրութիւններու կը հանդիպին, որոնք կարծես թէ իրարու հակառակ կ'երեւան: Կը սիրեն այդ զբոսաբութեանց լուծումը լսել:

Աւետարանիչներ ժամանակագրող պատմիչի եւ սղագրող զբաղիրի դերը

չունենալուն, դէպքերը յիտ եւ յառաջ կը շարեն, եւ իրարմէ միջոցներ չեն ճշդերս Աւետարանի ընթերցողներ հետաքրքիր են պատմական ոճի ճշգրտութեամբ եղելութիւնները շարադրուած տեսնել:

Աւետարանի քարոզութեանց մէջ շատ կէտէր կատարեալ յստակութեամբ չեն գրուած, եւ միմէն մնացած ու լուծման կարօտ խնդիրներ տեղ տեղ դիմաց կ'ելլան: Ասոնց լուսաբանութիւնը ոչ միայն հաճելի, այլ եւ կերպով մը բարեպաշտ զգացումներու անհրաժեշտ պահանջ կը դառնայ:

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ նպատակ ունի այդ օրինաւոր պէտքերուն համեստ չափով մը գոհացում տալ: Նախադասուած, կամ թէ նոր յօրինուած, այս անունը կը ցուցնէ, թէ պատմական ոճը վերադասուած է, եւ զանազան կէտերը համախմբելու ոճը ընտրուած է, ուզելով Չորս Աւետարաններուն պարունակութիւնը շարադրելով եւ համաձայնեցնելով եւ բացատրելով պատմել: Նոյն իսկ քարոզութիւններն ու վարդապետութիւններն ալ՝ պատմելու ձեւով յառաջ բերած են:

Այդ պատճառով Զանք գրուած է բոլոր կարեւոր տեղեկութիւնները ամփոփել, որով ընթերցողը պիտի գտնէ, ոչ միայն պատմական, վարդապետական, դաւանական եւ բարոյական տեսութիւններ, այլ եւ ժամանակագրական, տեղագրական, հնախօսական, գրչագրական եւ լեզուաբանական տեղեկութիւններ, ինչպէս որ եւ ինչչափ որ ընդ առաջ ելլող խնդիրներ կը պահանջէին, առանց հատորը չափազանց ստուարացնելու:

Նախնական եւ գլխաւոր փափաքն եղած է Աւետարանները ժողովրդակալացնել, եթէ այսպէս ներեալ է բացատրել, այսինքն է Աւետարանները հաւատացեալ ժողովուրդին ձեռնահասութեան եւ կարողութեան յարմարցնել, որպէս զի Աւետարանները հասկացած ըլլալու գոհունակութիւնը զգայ, եւ ներքին յագուրդը ստանայ: Աւետարանը ըլլայ իր հոգեկան անունը, բարոյացուցիչ ընթերցումը, եւ հաւատքը զօրացնելու միջնորդը:

«Համապատում» կը ներկայանայ պաշտօնէից ալ իբրեւ օգտաշատ ձեռնարկ մը, — զարգացեալ զասակարգը բացառութիւն համարելով — : Սակայն ոչ մէկուն անիրաւած ըլլալ կը կարծեմ, երբոր ըսեմ թէ քահանայական դասուն ստուար մեծամասնութիւնը պէտք ունի իւր ձեռաց ներքեւ ունենալ Աւետարանները ամփոփող եւ լուսարանող գիրք մը, ուր պէտք եղածը գտնէ առանց այս ու այն կողմ թափառելու եւ թարթափելու:

Դաւառներու եւ գիւղական շրջանակներու մէջ, Համապատում կրնայ, եթէ ոչ բոլորը, գէթ շատ մասերը, նոյն իսկ յատենի եկեղեցւոյ կարգացուիլ, իբրեւ ժողովուրդին ուղղուած քրիստոնէավայել բարոյական խրատաբանութիւն, տեղի չի նիչ եւ օգտակար, քան թէ կարկատուն եւ անյարիր քարոզներ:

Ուրախ պիտի ըլլայի եթէ նոյն իսկ կրօնուսոյցներ իրենց դասաւանդութեանց ընթացքը Աւետարանի վրայ հաստատէին: Այդ պարագային Համապատում կրնայ իբրեւ ուսուցչական ձեռնարկ ալ ծառայել, աշակերտաց հաճելի դարձնելով ձանձրացուցիչ կարծուած դասախօսութիւնը:

Անտարակոյս եմ, թէ ամենայն ոք գեղեցիկ եւ հրապուրիչ պիտի գտնէ սոյն գաղափարները. խնդիր է միայն թէ կըրցած եմ լիովին համապատասխանել նոյն գաղափարին իրականացման: Չեմ յաւակնիր նպաստաւոր դատաստան յայտնել, որ ոչ իրաւական է, եւ ոչ ալ թերեւս իրական: Միայն թէ ջանացած եմ յօգուտ գործածել, ինչ որ աշակերտական, ուսուցչական, վարդապետական եւ հովուական ընթացքներու մէջ ուսումնասիրած եմ, թէ գիրքերու վրայ եւ թէ պաշտօններու մէջ: Յատուկ ուղեցոյց կամ առաջնորդող հեղինակ մը ունեցած չեմ, բայց օգտուած եմ Աւետարաններու վրայ գրուած ամէն տեսակ գործերէն, նոյն իսկ հակառակաբան քննադատութիւններէն: Ջանացած եմ ընտրելագոյն տեսութիւնները իւրացնելով խտացնել, եւ ուրիշներուն ըսածները մեր Ազգային Եկեղեցւոյն եւ մեր ժողովուրդին պատշաճեցնել:

Մէկ քան միայն պակաս մնացած է ինձիս Պաղեստինի սուրբ տեղերը անձամբ այցելելով աւելի կենդանի եւ աւելի ճշգրտապատում ընել անոնց նկարագրութիւնները: Դժբաղդաբար պաշտօններու անընդհատ կաշկանդումը անհնար դարձուցած է փափաքիս կատարումը:

Փափաք մը եւս ունիմ սիրտիս մէջ, ինչպէս ներկայ հաստրովս չորս Աւետարանները դիւրահասկանալի ձեւով կը ներկայիմ մեր օրհնեալ ժողովուրդին, կարենայի նոր Կտակարանի մնացեալ մասերն ալ, այսինքն Գործք Առաքելոցը եւ Առաքելական Թուղթերը, միեւնոյն ոճով իւրաքու չարայարելով եւ համախմբելով եւ պատշաճապէս լուսաբանելով ժողովուրդին դիւրամատչելի ընել, եւ Համապատումի սոյն առաջին հատորին, որ կընայ ՅԵՍՈՒՍ մակաբարդի, երկրորդ մը կցել ԱՅՄԱՐԵԱՆԻ մակաբարդութեամբ, Բայց կը վախճամ որ այս փափաքս անդործադրելի մնայ, վասն զի կեանքիս օրն ալ երկեղյացեալ է. եւ հաղիւ թէ կարենամ ձեռքիս տակ եղած աշխատութիւնները լրացընել:

ՄԱՂԱՔԻՍ ԱՐԵՅՊ, ՕՐԾԱՆԵԱՆ

ՀԱՄԱԳՈՒԹԱՐԻՆ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ չարթու նիստի հրաւիրուած եկեղեցական Համագումարը բաւական աղմուկ հանեց իր տուած արդիւնքով թէ՛ լրացրական էջերուն եւ թէ՛ մասնատնոյ Պոլսոյ եկեղեցականներուն մէջ: Այդ Համագումարը իրովին պատկերացուց թէ այսօր ի՞նչ է մայրաքաղաքին եկեղեցականութեան վիճակը, ի՞նչ հոսանքներ կ'ընթանան անոր մէջ եւ ի՞նչպիսի թուումներու պէտք կայ այդ հոսանքներու աւերներէն զերծ պահելու համար ամբողջ կրօն-տուութիւնը:

Ըսուեցաւ թէ ժողովին շատ մը օրինական եւ ձեւական կէտերուն մէջ աւելի կամ նուազ թերութիւններ սպրդած կամ գործուած են: Ասոնց պատասխանա-

տուութիւնը անշուշտ՝ իբրեւ ընտրողական մարմին՝ կրօն. ժողովին կը վերապրի, եթէ այդ թերութիւնները Համագումարի նիստէն առաջ գործուած են, եկեղեցական Ընդհ. ժողովի այդ օրուան առժամեաց գիւշանին՝ եթէ անոնք նոյն նիստին պահուն տեղի ունենցած են: Հաս պէտք էի անշուշտ աւելցնել թէ Համագումարին իւրաքանչիւր անգամն ալ՝ որ այսօր առաւելութիւններ ունի եկեղեցական երեսփոխաններու ընտրութեան կերպերուն եւ ընտրուած անձերուն դէմ, իրենք ալ թերացած են, քանի որ պէտք կ'ըլլար պահուն չեն ներկայացուցած իրենց առարկութիւնները կամ բողոքները: Եւ ճիշդ այս կէտն է որ ընթերցողներու պաշարութեան յանձնել կ'ուզեմ ինչո՞ւ մինչեւ առաջին քուէհամարին արդիւնքը յայտնուիլը ու եւ շէշուկ չլսուի, ու եւ իսրահրդակցութիւն չկատարուի հրապարակաւ, թէ որո՞նք արժանի են երեսփոխան ըլլալու, եւ միայն բացարձակ աստուծութիւնով ընտրուած չորս առաջին երեսփոխաններուն՝ Գաբրիէլ Կարիս, Ճէվանիրճեանի, Ղեւոնդ Մ. Վ. Իսկրեանի, Գէորգ արքեպիս, Երէցեանի եւ Տրքայր Մ. Վ. Մարգարեանի անունները յայտնուելէ վերջ է որ փոթորիկը կը պայթի. ինչո՞ւ, կ'ըսեմ համեմատական քուէարկութիւնով մըն ալ Տ. Տրքատ քահանայ Պոյաճեանի, Վահրամ արքեպիս, Մանկունիի, Խաչատր Մ. Վ. Պէհրիկեանի եւ Եղնիկ Մ. Վ. Պապաեանի երեսփոխան հռչակուելէն եւ ճիշդ պարակով շնորհաւորութիւններ յայտնուելէն վերջ, տակաւին այսօր չչափներ կը շրջին, թէ վերոնշանակեալներէն որմանք, կամ ամբաստանուած, կամ առկախուած կամ անարժան, կամ առնուազըն իրենց նորոտաց ասպարէզին անյարմար եկեղեցականներ են: Ուրիշ չատեր ալ կան, որ զարմացած կը թուին բնաբնութեան այս տեսակ արդիւնք մը տալուն համար: «Ի՞նչ համեմատութիւն է պահիկա, իղբայր, կ'ըսեն անոնք, այսքան բազմութիւն ըլլայ քահանայական դասակարգը եւ նոյն իսկ Համագումարին երկը չորրորդը քահանայ հայրերը կազմին, եւ քեթ

երեսփոխաններէն միմիայն մէկը յաջողի քահանայ ըլլալ, այն ալ համեմատական մնալով ինչո՞ւ ութէն չորսը կուտակուե՞ր, այսինքն երկու եպիսկոպոս եւ երկու վարդապետ, եւ չորսը պարզ քահանայ չպիտի ըլլային, ինչպէս որոշած էր Մայր Եկեղեցւոյ քահանայից դատը, եւ իր ընտրելիներու անուններն ալ ներկայացնելով քուէարկողներուն, կ'ուզէր պիտի մը կազմել ըստ իր օրէնքի ոչ կատարեալ ձախողութեամբ, կրնանք ըսել թէ քիչ յաջողութիւն ունեցան անոնք» :

Ինչո՞ւ այս ամէնը . շատերը պիտի պատասխանեն անշուշտ. — վասն զի թեւրութիւններ կային, եւ պիտի պատասխանեմք թէ այո՛ւ թերութիւններ կային, եւ այդ թերութիւնները հետզհետէ կ'արմատանան Վերջին քուէարկութեան մէջ համեմատականէն անմիջապէս առաջ տեղի ունեցող վիճաբանութիւնները բարացուցական էին, բնորոշիլու համար մայրաքաղաքին եկեղեցականութեան երեսփոխանութիւնը ըմբռնելու կերպը, Հաղիւ մէկ երկու հոգի կրցան առարկել, եւ այն ալ քաղաքականութեան կցկալու բաժնի մէջ ընտրուածները Մանամաղբութեան պահած ըտրը արամաղբութիւնները չեն լրացներ, եւ պիտի ըսեմք թէ ընդհակառակն ընտրութեան արդիւնքը խիստ պատարար էր Համագումարին համար. միայն թէ դիտելի պարագայ մը կար, այն ալ հոն նիստ կազմողներուն մէջ ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍՆ ԷՐ, եւ երկրորդ մեր քահանաներուն մէջ ընդհանրապէս ԶԱՐԳԱՅՈՒԹԻ ՊԱԿԱՍՆ ԷՐ :

Ահա Համագումարին թերութիւնները :

1. Եթէ եկեղեցականութիւնը անկեղծ ըլլած ինքի մէջ յիշերին պիտի կրնայ տեսնել թէ քահանաներուն մէջ ալ մէկէ շատ աւելի արժանաւորներ կան երեսփոխանութեան :

2. Եթէ եկեղեցականութիւնը ամբողջովին զարգացած ըլլայ, շատ դժուարութիւն չպիտի կրենք եկեղեցական երեսփոխան միատուելու, եւ այն իսկ քահանաներուն մէջ ալ, եւ ասիկա այն պատճառով :

միայն պիտի ըլլայ, երբ վերջապէս ունենանք բարձրագոյն Ընծայարան մը :

Արմաշի ներքին տեսուչը, անցեալներէ Տեղապահ Սրբազանին ուղղելով առաջարկներ՝ փափագած էր որ քիչ մը աւելի աշխարհականացնեն Դպրեվանքը, Աւելի լաւ կ'ըլլար անշուշտ, եթէ առաջարկուէր որ այդ հաստատութիւնը քիչ մըն ալ յօտար աշխարհիկ կղերը բարձրացնելու գործին, Բայց նախ կրօնաւորը պէտք է ԱՆԿԵՂԾ ԸԼԼԱՅ, ապա զարգացած. ԳԱԶՐԻԿ

ՄԱՌԿԱՄԻՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Արցունքները ճէք Մարիամին մեղաւոր, երկինքին վեհ, արժանի զոհ մը չէին, երբ անցեալին ժամտ մեղքերը դառնագին Լացաւ նա, ո՛հ, ու ներուցու շուտ անոր :

Կոտրած սրտով նարդոսը սուղ, Թանկագին, Թափեց սիրուն Փրկչին օրհնեալ ոտից վրայ, Խղբ բուրբ զոր գնած էր անիկայ, Օրերուն մէջ իրեն վատմար, ողբագին :

Ու սրբեց նա իր մագերովն ոտկեղոյն, Ուր ատեն մը աղամանդներ շողալին, Թէն հիմա գոհարները զղջումին Փայլէին հոն, փառքին համար Աստըծոյն :

Աւելի լաւ չէին ասոնք, որ անգին Մազը, ո՛հ, այդ լացող աչքերն հրացայտ, Ու ներքնապէս արինոտած սիրտը այդ, Իրեն խոնարհ զոհ մը մատոյց երկինքին :

Դո՛ւն որ Դիմա մեղքերու մէջ կը ննջես, Կ'ուզե՞ս ըլլալ արժանաւոր երկինքին, Մարիամին պէս զղջա՞ ու լաց դառնագին, Սիրէ դո՛ւն շատ — եւ պիտ' ներուի շուտով քեզ :

ԽՈՒՆԿ—ԱՂԹԻՔ

Յառաջիկայ թիւով՝ ուշադրաւ յօդուած մը Վեր. Ա. Պ. Շմաւոնեանէ՝ Կղիկիոյ նահատակներուն տարեկիցին առթիւ, ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱԶԳԸ

Նաեւ բանասիրական շահեկան յօդուած մը՝ Թեոդիկեան՝

ԾՈՄ ԵՒ ՊԱՀՔ

Նոյն թիւով կը հրատարակենք նաեւ զրաիօսական մը՝ Շապին Դարահիսարի Միգրապոլիտ Տ. Պօղիկարպոսի ուշագրաւ գրքին վրայ որ խորագիր ունի, Հայ Եկեղեցիում զոհաբաւարեան տեսակետով :

ԿՐՈՆԻ ԴԱՍԵՐ

Ե. (Գ)

Պողոս ոչ միայն հացը եւ գինին Մարմին եւ Արիւն կ'ընդունին, այլ եւ դատապարտութիւն կը դնէ անարժանութեամբ ճաշակողաց համար, եւ պատուէր կուտայ նախ փորձել անձը, այսինքն ապաշխարել եւ պատրաստուիլ իւղճի հանդարտութեամբ մատչելու սուրբ սեղանին. իսկ այն որ այդ պարտաւորութիւնը չի կատարել եւ հացին եւ գինւոյն մէջ Մարմին եւ Արիւն չի զաւանթը, կ'ըսէ թէ նա անարժան է, նա դատապարտութեան ենթակայ, որովհետեւ խտիր դրաւ Տիրոջը Մարմնոյն մէջ. Հոս կը յիշենք Պողոսի սոյն խօսքերը. «Այսուհետեւ որ ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զքա՛տկս Տեառն անարժանութեամբ՝ պարտական եղիցի Մարմնոյ եւ Արեան Տեառն, փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի Հացէ անտի կերիցէ եւ ի Բաժակէն արբցէ, զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ՝ դատաստան անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրե զնարմին Տեառն» (Ա. Կորնթ. ԺԱ. 27-31):

Անոնք որ խտրել կը դնեն Քրիստոսի Մարմնոյ եւ Արեան՝ Հաղորդութեան խորհրդոյն մէջ, եւ կ'ըսեն թէ հաց եւ գինի է, եւ սոսկ յիշատակ մը Քրիստոսի մեղեղութեան, անոնք կը խտրեն զնարմին Տեառն. անոնք որ կ'ըսեն թէ Հացին եւ Գինւոյն մէջ Քրիստոս հոգեւորապէս կամ նիւթապէս ներկայ է, եւ չեն ընդունիր Մարմին եւ Արիւն Տեառն, անոնք կը խտրեն զնարմին Տեառն.

Յիսուս չըսաւ. ես հոգեւորապէս կամ նիւթապէս ներկայ եմ այս հացին կամ գինւոյն մէջ, այլ որոշ եւ մեկին կերպով յայտարարեց.— Այս իմ մարմինս է, այս իմ արիւնս է: Մենք երբ գինին կ'ըմպենք, կը հաւատանք թէ կ'ըմպենք զԱրիւն Յիսուսի. հոգեւորապէս ըմպելու գաղափարը Առաքեալը ուրիշ տեղ (Ա. Կորնթ. Ժ. 4) զարձեալ որոշապէս կ'ըսէ. «Զի ըմպին ի Հոգեւոր Վիմէն, եւ Վէմն էր Քրիստոս»

(*) Շար. նախորդ թիւէն եւ վերջ:

Այս տեղ բնաւ չ'ակնարկել Քրիստոսի Մարմնոյ եւ Արեան, այլ Քրիստոսի Հաւատքին ու Կեանքին հոգեւորապէս Արբւմին:

Պողոս այս Ա. Խորհուրդը աւելի հաստատուն հաւատքով ուսուցանելու համար, զարձեալ կ'անդրադառնայ. «Բաժակն օրհնութեան զսր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեան Քրիստոսի, հացն, զոր բեկանեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի» (Ա. Կորնթ. Ժ. 16):

Երկրորդ.— Հ. ցը եւ գինին երբ կը սրբազործուի, ա՛յ այնուհետեւ մարմին եւ արիւն է Քրիստոսի, ոչ յիշատակ, ոչ նըշանակ եւ ոչ պատկեր, վասն զի յիշատակը կամ նշանակը կամ պատկերը ճշմարիտ ըմպելիս եւ ճշմարիտ կերակուր է:

Առաքեալը որոշապէս կ'ըսէ մեզի.— Քանի անգամ որ հացը (սրբազործուած) եւ բաժակը (սրբազործուած) ուտէք եւ խըմէք, կ'ընդունիք թէ Յիսուս իր մեղեղութեամբ կենդանութիւն պարգեւեց մեզի. այս մեղեղութեան յիշատակը պիտի կատարեիք դուք. Ուրեմն երկու կէտ կայ դիտելի, սրբազործութիւնը եւ սրբազործեալը. զայս արարեիք առ իմոյ յիշատակին սրբազործութեան յանձնարարութիւնն է մեղեղութեան յիշատակին համար, իսկ սրբազործեալն՝ մարմին եւ արիւն Յիսուսի:

Երրորդ.— Մարմին եւ արիւն բաժերը բոլոր Առաքելական ուղղափառ Եկեղեցիներուն համար իրենց մէջ վարդապետական ոյժ ունին, ինչպէս ըսինք վերեւ:

Չորրորդ.— Յունական եւ մեր Եկեղեցիները ժէ. դարուն չէ որ ընդունած են հացին եւ գինւոյն Քրիստոսի Մարմնոյ եւ Արեան փոխարկումը, այլ յԱռաքելոց անտի Յունական Եկեղեցւոյ պերճախօս Հայրապետը՝ Ոսկեբերան կ'ապրէր Դ. դարուն մէջ եւ իր մարտիրոսաց ճառը կը գրէր 386/ին ուր կ'ըսէ. «Քանզի յանդիմանելով զանարժանութեամբ հաղորդեալն խորհրդոց, ասէր այսպէս.— Որ ուտիցէ եւ ըմպիցէ անարժանութեամբ, պարտական եղիցի Մարմնոյ եւ Արեան Տեառն. եւ զոր ասեն, այսպիսի ինչ է,

որպէս որք ի խաչ հանին ասէ զՅիսուս, այսպէս եւ որք անարժանութեամբ հաղորդին խորհրդոցն՝ տացեն վրէժս։ Պատմութեան Արքունի է Մարմինն Տեղունի, արդ որ զԱրքայական Միտանին պատառեաց, եւ որ դարձեալ անմաքուր ձեռքն պղծեաց, հառարակ թշնամանեցին, ուստի եւ հառարակ տանջեցին, զնոյն եւ առ Մարմնովն Քրիստոսի» (Ոսկեբերան ի ճառն Մարտիրոսացի)։ Կը տեսնէք որ Յունական Եկեղեցին սրբազործուած Հացը եւ Բաժակը՝ կը դառնան Մարմին եւ Արիւն Քրիստոսի, ո՛չ թէ Ժէ. դարուն մէջ, այլ յԱռաքելաց ասանդեալ եւ յաջորդաբար մինչեւ յՈսկեբերան՝ Դ. Դար հառնող դարուն մէջ։ Իսկ Հայկական Եկեղեցւոյ մասին՝ Պատարագամատոյցը ծայրէ ի ծայր կը սովորեցնէ մեզ թէ Հացը եւ Բաժակը Մարմին եւ Արիւն է Յիսուսի։ Կարդացէ՛ք 21. 22. 25. 26. 27. 30. 32. 33. 34. 35. 36 երեսները, եւ պիտի տեսնէք հոն հետեւեալ պարբերութիւնները. — «Քահանայազործել զքո փնարատ Մարմինդ եւ զպատուական Արիւնդ. — Ի խորհրդականութիւն Մարմնոյ եւ Արեան Միաձնի քո. — Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ. — Ի սպասաւորութիւն Մարմնոյ եւ Արեան Միաձնի քո. — Որով զՀացս եւ զԴինիս Օրհնեալ Մարմին եւ Արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. — Տաճարացո՛ր յընդունակութիւն Մարմնոյ եւ Արեան Միաձնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. — Արժանի արա՛ տալ մեզ յանարատ Մարմնոյ քումմէ եւ ի պատուական Արեանէ եւ ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս. — Արժանի արարեր զմեզ հաղորդիլ Ս. Մարմնոյ եւ Արեան Միաձնի քո. — Ի Սուրբ ի Սուրբ պատուական Մարմնոյ եւ յԱրեանէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեացուք արբութեամբ. — Զհաղորդութիւնս զայս մասնաւորեա՛ ճաշակման եւ ընկոյնն աշակերտացն. — Որ արժանի աւրարեք զանարժան հաղորդիլ Ս. Մարմնոյ եւ Արեան քո. — Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենդանարար եւ զփրկագործ Մարմինս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս ի թողութիւն մեղաց իմոց»

Իսկ Ոսկեբերանին ընծայուած աղօթքին մէջ կը կարդանք. — «Զիս անարժան արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել Աստուածային եւ սոսկալի խորհրդոյ քումմէ, անարատ Մարմնոյդ եւ պատուական Արեանդ»։ Արքայն Բարսիլ ընծայուած պատարագամատոյցին մէջ կը կարդանք. «Արա՛ զիս հաղորդ լինել ամենասուրբ Մարմնոյ եւ Արեան քո»։

Մուշեղ Եպիսկոպոս կ'ըսէ թէ գոյադափոխութիւնը Հատերանու ժողովը հաստատեց եւ Հայկական Եկեղեցւոյ պատարագամատոյցին մէջ գտնուած փոխարկում բառը վերջամուտ է։

Իրաւ է թէ 1215ին Իննովկենտիոս Գ. Պապը Հատերանու չորրորդ ժողովը գումարեց ուր հաստատուեցաւ գոյադափոխութիւն բառը. հացին եւ գինւոյն Քրիստոսի Մարմնոյն եւ Արեան փոխարկումին ըմբռնումը այն ժողովքին մէջ չորոշուեցաւ սակայն. տարրեր Եկեղեցիներ այդ գաղափարին արտայայտութեան համար ունեցան իրենց յատուկ բառերը, եւ դարերու ընթացքին մէջ այդ բառերն ալ այլափոխուեցան, բայց Հաւատքին ընդհանուր գիծը մնաց։ Ի հաստատութիւն մեր սոյն բացատրութեան, մէջ կը բերենք Եկեղեցական պատմագիր Կաթողիկ վարդապետի մը՝ Հ. Իգնատիոս Վ. Փափազեանի հետեւեալ տողերը. «Մարմին եւ Արիւն նորա են իսկապէս ի Սուրբ Խորհուրդ հաղորդութեան փոխարկութեամբ հացին՝ ի Մարմին եւ գինւոյն՝ յԱրիւն Քրիստոսի . . Այս ժողով (Հատերանու) նախ ի կիր առաւ եւ բառն գոյափոխութիւն՝ նշանակութեամբ փոխարկութեամբ, հացին՝ ի Մարմին, եւ գինւոյն՝ յԱրիւն»։ Ահա Կաթողիկ Եկեղեցին որ կը յայտարարէ թէ՛ Հատերանու ժողովէն առաջ Կաթողիկ Եկեղեցին ընդունած էր փոխարկութիւն բառը, որ Հայկական Եկեղեցւոյ մէջ մնացած է անփոփոխ. ապա ուրեմն չի՞ք կրնար ըսել թէ փոխարկում բառը վերջամուտ է Հայ Պատարագամատոյցին մէջ։ Իսկ եթէ Մուշեղ Եպիսկոպոս կը պնդէ թէ Ժէ. դարուն մէջ այդ գաղա-

փարը մտաւ մեր Եկեղեցւոյ մէջ, ապա ուրեմն պէտք է ընդունիլ թէ մենք այն ժամանակ Պատարագամատոյց չունէինք բնաւ, որովհետեւ անոր իւրաքանչիւր էջերը, ինչպէս յիշեցինք վերեւ, նոյն գաղտնարին կը նային. ջնջեցէք այդ էջերը ամբողջութեամբ, եւ սող մը չպիտի կըրնաք գտնել այնուհետեւ Բայց մենք գառնանք նպիւրնթաց դարերուն եւ ժէ. դարէն իջնեմք մինչեւ ժ. դար. հանգրայինք Նարեկացիին, հարցնենք անոր եւ նա պիտի պատասխանէ մեզ թէ այդ ըմբռնումը ինք սովորած է Առաքելոց սուանդութեամբ եւ Հայրապետաց վարդապետութեամբ: Նախ բանանք Նարեկի ԲԱՆ Ե. «Հացիւդ երկնայնով ջամբեցեր, Աստուածային Արեամբդ արբուցեր. . . ոչ մանրեցեր զոստս իմոց մատանցս ի չաշափելն զԲանդ Կենաց. . . ոչ պատեցին զինեւ մառախուղք ի ձօնել զքեզ, ոչ փշրեցեր զպնրս տառամանցս յըմբռնելն զքեզ» ԲԱՆ ԽԷ. «Որ մատուցեալ միշտ եւ անպակաս մեայ ի լրութեան, յարակայ զինեալք սղանդարանի անթիւ սեղանոյ անրու պատութեամբ բոլոր յամենայնի եւ բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս եւ իսկութեամբ ի ստորինս. . . փշրեալ եւ քաշիս ի մատունս անհաս, զի զհամայն հաւաքեսցէ առ ինոյն մարմին իւրո մն գիւրջ» Բան ԾԲ. «Եւ ընդ հաստողիդ միանայ Տերունի Մարմնոյդ ճաշակմամբ» ԲԱՆ ԾԴ. «Որ օգուտ ի ճաշակմանէ հիթէ գեհննին մատնեցայց» ԲԱՆ ԴԵ. «Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ ի հաճութիւն կամաց Առաջիդ»

Ինչպէս կը տեսնէք, խիստ շատ երկարեցաւ սոյն յօդուածս եւ այլ եւս աւելորդ կը նկատենք ուրիշ փաստեր մէջ բերելու. կը բաւականա՞նք այսչափով հաստատելու համար թէ Հացը եւ Դիմին Մարմին եւ Արիւն եւ Քրիստոսի:

Մուշեղ Եպիսկոպոս ամուսնոթիւնն Ս. Խորհուրդին համար է՛րսէ թէ՛ «Մեր «եւ միւս, Եկեղեցիները ամուսնութիւնը ճնկատելով հանդերձ բնական զաչիւր մը, «իբր սրբազան արարողութեան կը նային «անոր» Մեր Եկեղեցին երկար ժամանակ

«ամուսնութիւնը բացարձակ փորձուող «չնկատեց»

Խորհուրդ բառը կը յայտնէ ճշմարտութիւն մը որ մատչելի չէ՛ մեր մտքին: Եկեղեցին խորհուրդ ընդունած է՝ ամուսնութիւնը. «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ թէ Քրիստոս եւ յեկեղեցի» (Եփես. Ե. 32) եւ զայս աւելի բացատրած է Առաքելաւը 21 համարին մէջ. «Լանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իրեւ Տեառն, զի այր է զլուսն կնոջ որպէս եւ Քրիստոս զլուսն է Եկեղեցւոյ. . . որպէս Եկեղեցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւրեանց արանց յամենայնի» Իսկ 28 համարին մէջ կը գրէ. «Նոյնպէս եւ արք պարտին սիրել զիւրեանց կանայս իրեւ զիւրեանց մարմնս, որ սիրէ զկին զանձն իւր սիրէ»:

Երկու անձերու միութեան խորհուրդը թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Ուխտին մէջ բացորոշապէս նշանակուած է: Մովսէս կը գրէ Մննդոց գրքին մէջ. «Եւ եղեցին երկուքեան ի մարմին մի»։ Նոյնը կը հաստատէ նաեւ Մատթէոս ԺԹ. 3—9 համարին մէջ:

Կրօն, Ժողովոյ կողմէ սոյն զասագրքին վաւերացումը եւ Պատրիարքարանէ անոր գործածութեան յանձնարարութիւնը իբր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ վարդապետութեան համաձայն պատրաստուած գործ մը, յաւիտեական զատապարտութիւնը պիտի ըլլայ անոնց, ցորչափ նոր պաշտօնագրով մը չդարմանուի այս պատապարտելի գնահատումը եւ վաւերացումը: Անցեալ տարւոյ մէջ բողոքած էի այդ գրքին վաւերացումին համար Վիհափառ Հայրապետին, որ կը գրէր ինձ նոյեմբեր 10 ամսաթիւ գրով թէ սոյն գրքին օրինակը ուղած է Ազգ. Պատրիարքարանէն պաշտօնապէս իջնունութիւն՝ պատասխանատուութիւնները ճշդելու համար: Չենք պիտի թէ Պատրիարքարանը կատարած է ՎԻՆ. Հայրապետին յանձնարարութիւնը, զրկած է պահանջուած մէկ օրինակը, եւ էջմիածնայ մէջ ձեռնարկուած է ընտելութեան:

ՀԱՐԱՅԵԱՆ ԲԶ. ԷՔՍԷՔՏԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Քաղաքիս մէջ երկար աահներէ ի վեր սովորութիւն դարձած է թէ, պատարա- գիչ քահանան մինչեւ որ 24 ժամը չանցնի կրկին չի կրնար պատարագել, եւն:

Այս սովորութիւնը ո՞ր աստիճանի ստուգութիւն ունի, եկեղեցական օրինաց համաձայն է. այդ տեսակ օրինական ար- գելքներ կան որպէս զի քահանայ մը 24 ժամուան մէջ 2 անգամ չկրնայ պատա- րագել:

Տեղս 2-3 եկեղեցիներ, նոյնպէս հայ գիւղերը, առ ի չգոյն նիւթականի՝ ստիպ- ուած են մէկ քահանայ միայն ունենալ: Ասոնք ըստ վաղեմի սովորութեան՝ ճրա- գալոյցի երեկոյին պատարագ չեն մատու- ցանք, մինչդեռ ժողովուրդը այդ տեսակ նուիրակնն օր մը պատարագ տեսնել եւ հաղորդուիլ կը փափագի. իրարանցումներ, դիտողութիւններ, նոյն իսկ անտեղու- թիւններ սրկաս չեն ըլլար:

Ներկայիս կը խնդրենք ձեր արժա- նապատութենէն որ հաճէիք մօտաւորա- պէս «Տաճար»-ի միջոցաւ լուսարանութիւն մը տալ այս կարեւոր խնդիրին նկատ- մամբ, որպէս զի գէթ յառաջիկայ Ս. Զատիկ առթիւ յամէն պաշտօնեայ խղճի մօռք կարենայ կատարել անթերի իւր պարտականութիւնները՝ ի փառս Հայաս- տանկայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, որոյ եմք խոնարհ պաշտօնեաներ:

Եւդոկիա, 10 Մարտ

Դիւան Կրօն. Ժողով

Ասեմապետ

ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

Վ. Ասեմապետի

ԽՈՐԷՆ ՔԱՀ. ԳԱԼԵՍԵՃԵԱՆ

ԽՄԲ. ՏԱՃԱՐԻ

Եւդոկիոյ Պատկ. Կրօն. Ժողովոյ անդա- մապետ Ս. Հայրեր մասնաւոր շնորհաւո- րութեան արժանի են, Հայ. Ս. Եկեղեցւոյ կարգաց եւ կանոնաց հաւատարմ մնալու

իրենց խղճութեան համար, զոր ասկէ ա- ռաջ ալ ցուցուցած էին, Եկեղ. բարեկարգ գութեան խնդրոյն առթիւ իրենց ուղիւս ու- շագրաւ գրութիւնով, որ երեւցաւ Տաճարի անցեալ տարուան վերջին թիւերէն մեկուն մէջ: Բայց այս անգամ մեզ կը բռնի քե խղճութիւնը ծայր աստիճանի կը ճաննի: Նրե իրենց հարցումը այն ըլլաւ քե միեւնոյն քահանան միեւնոյն ցորեկուան մէջ կրնայ երկիցս պատարագել, հաստատուեալ ժխտական պիտի ըլլար մեր պատասխանը, որովհետեւ՝ քեւ չենք յիշեր եկեղեցական կանոն մը որ արգիլէ ասիկայ, բայց տարական ողջմտու- թիւնը չի բոլարեւ արդէն, քանի որ պա- տարագիչ քահանան ծով բերնով ոյտք է մօ- տենայ այդ Ս. Խորհուրդին: Բայց իրենց հար- ցուցած պարագան նոյնը չէ: Ճրագալոյցը եւ Զատիկ կամ Մեծնոյի առտու միեւնոյն օրը չեն նկատուիր, որովհետեւ օրը արեւամտեան ետք կը սկսի: Ճրագալոյցը նախորդ օրէն Մեծնոյի կամ Զատիկ առտուան, եւ նոյն ի- ռիկունը պատարագող քահանան կրնայ ըս- տել՝ պիտի կատարեալ հանգարութեամբ յա- ջորդ առտուն վերսին մօտենալ նոյն Ս. Խոր- հուրդին, դարձեալ ծով բերնով:

ՍԻՄՔՕՍ՝ ՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պատրիարք սրահներու դիմու ին վրայ, Պետական Խորհրդոյ որոշմամբ զինուորական ծառայութենէ առժամապէս զերծ պիտի մնան թափօնները: Տակաւին յայտնի չէ, սակայն, թէ իւրաքանչիւր եկեղեցի քա- նի թափօն պիտի ունենայ, եւ ինչ պիտի ըլլայ կառավարութեան վերջնական որոշ- շումը այս մասին:

Արդարեւ վաւերութեւ մէջ կոշտակրօ- նութեան պատրաստուող դպիւրները, թա- փօնները թէեւ զերծ են զինուորական ծա- ռայութենէ, սակայն եկեղեցիներու մէջ ծառայող թափօններու մասին օրէնք մը չկար պարզ:

Նախապէս դիմում եղաւ աստիճանա- լոր պալիստիկոն համալսարանի ղեկավարը:

ընդունելի նկատուեցաւ, վասն զի կարելի չէր սահմանափակել զպիրներու թիւը, իսկ հիմա որ Տիաֆօսներու մասին տրուած առժամեայ թոյլտուութեան մը հանդէպ կը գտնուինք, ի՞նչպէս պիտի հաստատուի եւ վաւերացուի այսպիսիներու ծառայութիւնը կամ պաշտօնը:

Զինուորական իշխանութիւնը Տիաֆօս կը ճանչնայ այն անձը՝ որ ինքզինքն ճշդօրէն ե հոգեւորականութեան եւ ասկէ դուրս ուրիշ ո՛ր եւ չգրադուժ չունի: Միւս կողմէ եկեղեցիները չեն կրնար մասնաւոր թոյլտուութիւն սահմանել Տիաֆօսներուն: հետեւաբար ասոնք իրենց եկեղեցական ծառայութենէն ետքը, իրենց ապրուստը ապահովելու համար ստիպուած են աշխատելու: Հոս է խնդրոյն ամենէն մոթէկոզմը, զոր պէտք է բացատրել եւ մանրամասնել, ապագայ անպատեհութեանց առաջին առնելու համար:

Պէտք է գիտնալ թէ զինուորական իշխանութիւնը իր կողմէ մասնաւոր քննութիւններով ալ կը հաստատէ ո՛ր եւ է մէկու մը Տիաֆօս ըլլալը կամ ոչ, մասնաւորօրէն, շատ անգամ խաբէր համար տրուած վկայականներ ալ տեսնուած ըլլալով Պատրիարքարաններու վկայականները շատ բան կորսնցուցած են իրենց ուժէն:

Այս պարագան մասնաւորապէս յառաջ բերինք հոս, Պատրիարքարանի մէջ ուշադրութիւն դարձնելու համար տրուած վկայութիւններու վրայ, եւ բարձր պահելու համար Պատրիարքարանի Հայ եւ հոգեւորականութեան պատիւն ու արժանապատուութիւնը:

Պէտք է անմիջապէս սահմանել իւրաքանչիւր եկեղեցւոյ Տիաֆօսներու թիւը եւ անոնց անունները հաղորդել պատկանեալ պաշտօնատան: առանց այս օրինական ձեւակերպութեան, թերեւս այս դիմումնալ անհետեւանք միայն նախորդին պէս:

Վերջացնելէ առաջ, անգամ մըն ալ յանուն ազգային արժանապատուութեան կը խնդրենք որ Ազգ. Պատրիարքարանը լուրջ ուշադրութիւն մը դարձնէ զինուորական գործերու համար մատուցուած խնդրագր-

րերու, եւ ըստ այնմ տայ հարկ եղած իմուխապէրները:

Յաւ է ըսել թէ կարգ մը միջնորդներ Պատրիարքարանի անունը չհազործելով, հայ հոգեւոր իշխանութեան անունը արատաւորելէ զատ, գործի տէրերուն ալ մեծ վնաս կը պատճառեն:

Պէշիկթաշ

Թ. ՄԻՐՏԻՉԵԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Արեւելի մարտ 12, Շր. օրուան թիւին մէջ Մ. Թ. Մարկոսեան, պատրիարքու նկատուած հինգ եկեղեցականներէն Տ. Թորգոմ և Տ. Բարգէն եպիսկոպոսներու զուգակշիռը փորձելով, երկուքն ալ անյարմար կը գտնէ պատրիարքութեան, եւ «ուժգին թափով մը» Իզմիտի առաջնորդ Ստեփաննոս Ս. Ը թեկնածու կը ներկայացնէ այդ պաշտօնին: Ամէն մարդ ազատ է իր շատ լաւ ճանչցած եպիսկոպոսը ներկայացնելու այդ պաշտօնին: այս կողմէն ու եւ է առարկութիւն չունինք յօդուածագրին: Բայց համաձայն չենք իրեն, երբ իր զուգակշիռը ուղուցիկ խօսքերու հակադրութեամբ մը կը շինէ, փոխանակ փաստերով եւ ապացոյցներով հաստատելու երկու եպիսկոպոսներու առաւելութիւնները եւ թերութիւնները: Շատ աւելի զարմանալի են յօդուածագրին սա խօսքերը, թէ «որոնք մօտէն ճանչցած եւ մասամբ «իրենց նկարագրին մէկ որոշ փուլերուն «հետամուտ եղած եմ, այն օրէն ի վեր՝ երբ «այս երկու եկեղեցականները փոխ—վա—ճահայր կարգուած էին Արմաշի գպրեվան—«քին, ուր գրեթէ անձնաւոր տարի ընտանիքով ու խտաբնացութեան կ'երթայինք, «որով լայնօրէն շփում կուենայինք իրենց հետ»: Այս խօսքերը զարմանալի են, որովհետեւ այս պայմաններու մէջ յօդուածագիրը գտնէ «լայնօրէն շփում» չէր կրնար ունենալ Բարգէն եպ. ի հետ, որ շատ կարճատեւ մը փոխ—վանահայր եղած է Արմաշի Դպրեվանքին, 1907 ի դեկտեմբե-

րէն մինչեւ 1909 տարի. եւ այդ միջոցին հանդիպող 1908 թ ուխտաւորութեան ժամանակը (Օգոստ. — Դեկտ.) Պոլիս անցուցած է իր եւ Դպրեւանքին գործերու կարգադրութեան համար. իսկ 1909 Մարտին արդէն առաջնորդ ընտրուած է Գաղատիոյ եւ հետեւաբար վերջնականապէս թողած է Արմաշը Ապրիլի մէջ. Իր «լայնօրէն չբփումը» թերեւս իրաւ է Թորգոմ եպս. ի հետ, որ ստուգել երկար ատեն, կարծենք 14—15 տարի, պատճառ վարեց Արմաշի Դպրեւանքին մէջ՝ իբր ներքին Տեսուչ եւ իբր Փոխ—Վանահայր. Բոլորովին հաւանական է որ Բարգէն եպս. չի ճանչնար յօգուածագիր Մարկոսեանը: Եթէ յօգուածագիրը իր ըսածին պէս շատ մօտէն ճանչցած ըլլար Բարգէն եպս. ը, ամէնէն առաջ չպիտի ըսէր թէ Բարգէն եպո. պճնասէր է. վասն զի ան եօթը տարի Պոլիս ապրեցաւ եւ օր մը պճնասիրութիւն չտեսանք վրան. մինչեւ հիմայ դեռ մանիշակ կատարով փակել իսկ չի գործածեր, ոչ ալ շատ մը եկեղեցականներու պէս թեւնոց եւ օձիք: Բարգէն եպո. յօգուածագրի ըսածին պէս գոռարաբարոյ ալ չէ. շատ լուրջ է. ուշադրաւ է իր կշռուած խօսուածքը. կը սիրէ սրամտել ի հարկին: Արդէն իր բենեդիկտեան աշխատութիւնները կը հաստատեն թէ լուրջ եկեղեցական մըն է Բարգէն եպո. եւ հետեւաբար նկարագրի տեղ մէկը, որ կարող է խօսքով ալ գրչով ալ պաշտպանել իր համոզումները: Եւ այս յատկութիւնը ոչ ըմբոստացում է, ոչ ալ ընդվզում: Եօգուածագիրը եթէ մօտէն ճանչցած ըլլար Բարգէն եպս. ը, անշուշտ չպիտի ըսէր թէ «Թորգոմ եպո. ի պէս ան ալ քանի մը տարի կ'ընէ որ գաւառական պաշտօն ստանձնած է», եւ թէ «անկէ առաջ ասանկ վանական մանիկ պատերուն խորքը բանաստեղծական փանդիւ կ'ածէին»: Ասիկա վերէն վար սխալ է Բարգէն եպս. ի համար: Եթէ «Արեւելք» յօգուածագիրը կարդացած ըլլար անցեալ տարուան Տանաւրի ա'ն թիւը, ուր համառօտ կենսագրութիւնը հրատարակուած էր Բարգէն եպո. ին, իր ձեռնադրութեան առթիւ, եւ կամ գոնէ եթէ տեսած ըլլար այն տարուան Ամենուն Տարեցոյցը, երբեք այդպիսի սխալ մը չի պիտի ընէր: Որովհետեւ Բարգէն եպո. միշտ գործօն եւ գործնական ոգիի տէր եղած է, բանաստեղծական փանդիւին ալ չէ մօտեցած: Առաջնորդական պաշտօններ վարած է Սամսոն, Մուշ, ուր բանտարկուելով Պոլիս բերուած եւ ար-

գիլուած է հոս երկար ատեն, շատ զրկանքի ենթարկուած է եւ առանց վհատելու աշխատած է Պոլսի մէջ, մասնակցած է շատ մը դրական ու քննչական յանձնաժողովներու աշխատութիւններուն, միշտ ծանր բաժին մը ստանձնելով աշխատութեան, հրապարակագիր եղած է եւ յայտնած է նոյն իսկ համարեան գրաքննութեան ատեն իր տեսութիւններն ու համոզումները եկեղեցական եւ կրթական գործերու վրայ, նոր աշխատութիւններու կեսնք սուած է, վերջապէս աշխատած է եւ կ'աշխատի անխտն մինչեւ հիմա Գաղատիոյ առաջնորդական Աթոռին ալ վրայ:

Աւելի լաւ կ'ըլլայ անշուշտ, որ այսպիսի շատ փափուկ խնդիրներու մէջ, յօգուածագիրները շտաբուին նկատումներէ եւ կիրքերէ, եւ զգուշանան իրենց լաւ չճանչցած անձերու մասին գաղափար յայտնելէ: Մեր եկեղեցականներու արժանիքը գնահատելու ամէնէն առողջ եւ ամէնէն ապահով միջոցն է անոնց գաւառներու մէջ ունեցած պաշտօնավարութիւնները քննել եւ հարցնել գաւառներէն, եթէ այս մասին Պատրիարքարանը չունի պէտք եղածին չափ ապացոյց: Զրի խօսքերով ուղիղ չէ ասոր անոր արժանապատուութիւնը խմբել:

Եօգուածագիր Մարկոսեանը փորձառութեան եւ վարչագիտութեան ալ խօսք կ'ընէ. Ինչէ՞ն դիտէ որ, զոր օրինակ, Բարգէն եպս. անփորձ է, վարչագէտ չէ. իր այսչափ առաջնորդական պաշտօններու միջոցին օր մը ո եւ է գիտողութիւն հասած է Պատրիարքարանի Սամսոնէ, Մուշէն, Արմաշէն, Գաղատիայէն, թէ վարչական այս կամ այն սխալով ազգի գործերուն վնասած ըլլայ կամ տարապարտ զբաղումներով զբաղեցուցած ըլլայ Ազգ. Կեդր. վարչութիւնը: Արգէն դիտուած է Ազգ. Պատրիարքարանի մէջ, որ Բարգէն եպս. իբր Առաջնորդ նոյն իսկ Սուլթան Համիտի ատեն, աշխատած է որ կարելի եղածին չափ քիչ զբաղեցնէ Ազգ. Պատրիարքարանը իր վիճակային գործերով: Հարկաւ ասիկա շատ բան կը նշանակէ:

Պարտք զգացինք այս րացատրութիւնները տալ հրապարակաւ միմիայն ուղղելու համար յօգուածագիր Մարկոսեանի սխալները, եւ լրացնելու համար իր սուած տեղեկութիւնները Բարգէն եպս. ի մասին:

ՃՇՄԱՐՏԱՆՈՅԶ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՀԱՍՍԱՆ ՊԵՅԼԻԻ ԵԿԵՂԵՑԻՈՒՆ ԲԱՆՈՒՄԸ

Աւերջին եօթնեակին մէջ Հայու միւն-
քերն զբաղեցնող ամենատխուր խնդիրն
եղաւ Հասան ՊԵՅԼԻԻ՝ Կիլիկեան արկած-
եալ քաղաքի մը՝ նորակառոյց եկեղեցիին
ի հիմանէ քանդուածը, Ատանայի կուսակա-
լին հրամանով, բարձր գիւղի մը՝ բլուրի
մը վրայ շինուած ԸԼԼԱԼԸ առարկու-
թեամբ։ Այս անթրինակ ընթացքը՝ լուսա-
միտ կուսակալի մը գիտութեամբ և հրա-
հանգով, ի խոր խոցեց ամէն Հայու սիր-
տը։ Տեղեկաց Ս. Հայրը փութաց անհր-
աժեշտ դիմումն ընել, քանդուած եկե-
ղեցիին տեղ նոր մը շինելու համար պե-
տութեան ծախքովը, և յուսադրող խոս-
տումներ առաւ։ Գուցումը պէքան մեծ
եղած է որ Երեսփոխաններէ ոմանք փա-
փաք յայտնած են յառաջիկայ ուրբաթ՝
ապրիլ 1՝ Սփ, ժողով գումարել, և ժո-
ղովի ներկայացուցիչներէն կազմուած պատ-
ուիրակութեան մը միջոցաւ դիմում ընել
Բ. Դրան. բայց Ազգ. վարչական շրջա-
նակներուն մէջ կըսուի թէ արդէն վար-
չութիւնը ձեռք առած է խնդիրը և կը
կատարէ բանակցութիւններ, որոնք եթէ
նպաստաւոր ելքի մը չյառնին, աւելի
բանաւոր է այն պտեն միայն խնդիրը
տանել Ազգ. ժողովին։

ԵԿԵՂԵՑԻՈՒՆ ՈՒԹ ԵՐԵՍՓՈՒՆՆԵ-
ՐՈՒ (Վիճակաւ դադարած կամ հրաժարած)
տեղ նորեր ընտրելու համար պոլսեանակ
քոչիք եկեղեցականք հրաւիրուած էին նիստ
գումարել անցեալ ԵՃ. 17 Մարտ։ 123
հրաւիրեալներէ 91ը բուէ տուին անձամբ
կամ նստօրովի Արդիւնքն եղաւ, Տ. Գաբ-
րիէլ Եպիսկ. Ճէվահիրճեան՝ 71 բուէով,
Տ. Գեորգ Արքեպ. Երէցեան 52, Տ. Ղե-
ւոնդ Ծ. Վ. Դուրեան 56, Տ. Տիրայր Ծ.
Վ. Մարգարեան 47 բուէով բացարձակ
մեծամասնութիւն շահեցան։ Իսկ համե-
մատակմն ընտրութեամբ Երեսփոխան
հռչակուեցան 44 ներկաներու 31 բուէով
Տ. Վահրամ արքեպ. Մանկունի, 24
բուէով Տ. Խոսրով Ծ. Վ. Պէհրիկեան, 22
բուէով Տ. Եղիշի Ծ. Վ. Պանկեան, և 33
բուէով Տ. Տրդատ քահանայ Պոյաճեան։
Ընտրութեան արդիւնքէն ետքը, ներկայից
ոմանց կողմէ գիտութիւններ եղան ձե-
ւական թերութիւններու մասին, և յառաջ
եկան արդիւնքի դուռ բացաւ։ Հաճ մը
քննադատութիւններու, ընտրութեան ափ-

յափոյ եղանակին և ընտրութեան նմանց
անձին մասին։ Ատոնց ամփոփումը կը-
նէ քիչ մը անդին մեր յարգելի աշխա-
տակից Գաբրիէլ, որու գրութիւնը առիթ
պիտի տայ մեզ՝ յառաջիկայ թուով աւելի
երկարօրէն գրելու։

ԵՐՈՒՍԱԼԻՄԻՆ Իբրեւ ըմբոստ Վ. Պալին
բերուած երեք վարդապետներու մասին
քննիչ յանձնաժողովին անդեկագիրը անց-
եալ արթաւ ուշադրութեան առաւ Խառն
ժողովը, և միաձայնութեամբ հաստատե-
լով անոնց ըմբոստութիւնը՝ Կեդրոնի հրա-
հանգաց գործադրութեան դէմ, որոշեց
աքսորել զանոնք։ Կարապետ Վ. Տ. Կարա-
պետեանը՝ Լիւմ Անապատ, Սարգիս Վ.
Սարգսեանը՝ Կառն Անապատ, և Աբգար
Վրդ. Եօթնեղապրեանը Մշոյ Ս. Աղբերի-
կի վանքը։

ԵՐԶՆԱԿԱՅԻՆ լուր կը տրուի թէ տեղ-
ւոյն ութ քահանայներ երկու օր ժամեր-
գութիւն չեն կատարեր, գանգաւ ունե-
ւալով Առաջնորդ Հայրսուրբին դէմ։ Ինչ
որ ալ ԸԼԼԱԼԸ դատապարտելի կը գտնենք
իրենց ընթացքը։ Ենթադրելով իսկ որ ի-
րաւունք ունենան իրենց գանգաւին մէջ,
պետք է գիտնային որ եկեղեցին ոչ վար-
դապետին ռեիականութիւնն է ոչ ի-
րենցը, այլ ժողովուրդինն է, որ անպա-
ման իրաւունք ունի իր եկեղեցին բաց, և
հոգեւոր պաշտօնեաները իրենց պարտա-
կանութեան գլուխը տեսնել պահանջելու։

ՏԵՐՈՒՆԻ. —ու Ազգ. Երեսփոխան Միհր-
էֆ. Հայկազն զօրախտութիւնն ունեցաւ
կորսնցնելու իր մայրը՝ Տիկին ՄԱԲՐՈՒ-
ՀԻ ՀԱՅԿԱՅԻՆ, Գուրդակաւորութիւնը
կատարուեցաւ ԴՃ. օր վայելուչ չքով Պէ-
շիկիճաչի Ս. Եկեղեցւոյն մէջ, Պատր. փո-
խանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան ներ-
կայ էր ի դիմաց Ս. Տեղապահին կը նա-
խագահէր Տ. Յովն. Արքեպ. Արշարունի,
իր շուրջն ունենալով հինգ վարդապետ և
քահանաներ Սգակիր կեցած էին քահա-
նաներ, և յուղարկաւորներու մէջ կը
նշմարուէին Ազգ. Երեսփոխաններ, ժողովոց
անդամներ եւն եւն։ Մեր խորունկ վըշ-
տակցութիւնը՝ Հայկազն էֆ. ի եւ իր
պարագաներուն։

ԱՐՏՈՆԱՏԻՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲՆՆՑ ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԲՆՆՑ ԿԵՂԵՑԻՈՒՆ

ՏՊԵՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

A R M E N I A

Ամերիկացի նշանաւոր գրագէտներու եւ գրագիտուհիներու աշխատակցութեամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հրատարակուած գեղեցիկ պարբերական մը, որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրականութիւնը եւ պատմութիւնը անգլիախօս ժողովրդին:

Armenia-ն կը պարունակէ այնպիսի գրական զմայլելի էջեր, որոնք հաւասարապէս կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը:

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Եօրք Էյմէրիքըն հանրածանօթ օրութերթին գրական բաժնի խմբագրապետը:

—«Armenia-ն, որ Արեւելքի չափ պայծառ ու վճիռ գրականութիւն մը կը ցոլացնէ, կրնայ յաջողակօրէն բաղձաւորել Ամերիկեան գրական Հանդէսներու հետ, պայմանաւ որ վերջիններէն պակսեցուի զիրենք նսեմացնող վաճառականական ոգին»:

Գօլէճներու եւ բարձրագոյն վարժարաններու մէջ անդիներէն լեզուի դասընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմապէս կը յանձնարարուի այս հոյակապ պարբերականը, որուն տարեկան բաժնեդինն է միայն մէկ տոլար Ամերիկայի, եւ տոլարուկէս Թուրքիոյ համար:

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 201 Madison Square Station
New York City

Ապառիկ ապսպրանքներ նկատի չեն առնուիր:

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

Չորս Աւետարաններու պարունակութիւնը՝ օտարաբերով, եւ համաձայնելով եւ բացատրելով պատմութիւնը. — Պարգարանեց՝ Մաղաքիա Արեւիսկոպոս Օրմանեան, (նախկին Պատրիարք). — Հրատարակիչը՝ Վ. եւ Հ. Տ. Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911: Դին 25 զրշ. լաթակազմ:

1100 ստուար էջերէ բաղկացեալ ընդարձակ հատորի մը մէջ նախկին Պատրիարք Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Արքեպ. Օրմանեան ամփոփած, դասաւորած եւ ամբողջացուցած է Լոյս կրօնաթերթին մէջ սկսուած եւ յետոյ Արեւելի մէջ շարունակուած յօդուածներու շարքը: Հեղինակին զլիաւոր նպատակն եղած է, կերպով մը ժողովրդականացնել Աւետարանը, այսինքն հաւատացեալ ժողովրդեան կարողութեան, ձեռնհասութեան յարմարընել: Հատորին մէջ կը պարգուին ոչ միայն պատմական, վարդապետական, դաւանական տեսութիւններ, այլեւ ժամանա-

կագրական, տեղադրական, հնախօսական, գրչագրական եւ լեզուաբանական տեղեկութիւններ: Անհրաժեշտ դիրք մը ամէն ճշմարիտ հաւատացեալի, մասնաւորապէս եկեղեցական պաշտօնէից, եւ մանաւանդ քահանայական դասու ստուար մեծամասնութեան, որ ատոր մէջ պիտի գտնէ Աւետարանները ամփոփող եւ յուսարանող ամէն տեսակ տեղեկութիւններ՝ առանց այս ու այն կողմ թարթափելու: Հատորը ճոխացած է երկու բացատրական քարտէսներով (Պաղեստին եւ Երուսաղէմ), եւ երեսունէ աւելի պատկերներով:

ՀՄԱՅՆԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐԲ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՏՈՐ

Հարիւրից 40 զեղշ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սիւմպիլլիւ Խան

ԼՐԱԳԻՐ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆ

Գրիգոր Արծրունիի հիմնած եւ իր ուղղութեամբ քաջածանօթ սոյն թերթը կը շարունակուի հրատարակուիլ խմբագրութեամբ ծանօթ գրող Պ. Համբարձում Առաքելեանի, եւ գործակցութեամբ կարող աշխատակիցներու: Տարեկան բաժնեգին 10 ռուբլի: Թուրքիոյ համար 120 ղրշ: Հասցէ TIFLIS, Rédaction du Journal Mschak.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ. — Ուղեւորութիւն Բաղր Ռոսպախ գերմանացւոյն. թարգմանեց գերմաներէնէ Վ. Ճանիկեան. — Հրատարկ. Բիշտօֆճեան եղբ. «Արամազդ» գրատան, Կալաթա, Գուլէ Գափու, թիւ 695: Գին 3ուկէս ղրշ:

ՀԱՄԱՍՆՈՒՆԴ ԵՒ ԱՇՂԱՆ Ի ՔԱՌԱԿԵՐՊՆ. — Պատրաստեց Յակոբ Յ. Աղլանլիքեան, հեղինակ «Ուլնիա կամ Զէյթուն» գրքին որ պատկուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով: Ներկայ հատորը կը պարունակէ դաստիարակութեան հարցին, ազգային օրուան խնդիրներու, հին ու նոր եւ ապագայ կեանքի վրայ նորօրինակ տեսութիւններ եւ առաջարկներ: Հեղինակն իր արգահատելի վիճակով արժանի է քաջալերութեան: Հասցէ՝ Մեծ Շուկայ, Թէրզիպաշի փողոց, թիւ 20: Գին 10 ղրշ:

ԿԵԱՆՔԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ. — Կազմեց Սերոյիք Վրդ. Սաւուրեան. — Իր մէջ կ'ամփոփէ փրանքիւնի, Բոչիտի, Կարֆիլտի եւ այլ նշանաւոր անձնաւորութեանց կեանքի ծրագիրները. եւ ուրիշ կարեւոր նիւթեր: Հայ պատանիներու, երիտասարդներու եւ ամէն կարգէ եւ հասակէ գործի տէր մարդոց համար անհրաժեշտ եւ պիտանի գործ մըն է: Գին 2 ղրշ: Կեդրոնատեղի զարգարեան գրատուն:

«ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔ». — Վերթոր

Հիւկոյի՝ աշխարհահռչակ գրագէտին գլուխ գործոցներէն մէկը, որ կրնայ Աւետարան մը համարուիլ, եթէ անոր «Թշուառներ»ը Աստուածաշունչ մըն է, ինչպէս ըսած է Թոլսթոյ: Թարգմանութիւն Աւետիս Գուլյուճեանի, եւ հրատարակութիւն Պոսթոնի Ազգ պատուական շաքաթաթերթին: 530 ընդարձակ էջերէ բաղկացեալ հատոր մը. Գին 1 տոլար: Լաթակազմ՝ 1ուկէս տոլար, Փառակազմ 2 տոլար:

Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր

ԲՈՂՐՈՋ. — Պատկերազարդ հանդէս Ամսթերայ. — Խմբագրապետ Մամիկոն Վարժապետեան. — Մարզումնի մէջ սկըսած է հրատարակուիլ, գլխաւորն պատակ ունենալով քաջալերել սկսնակ գործները, որոնց մէջ թագուն տաղանդներ կրնան գտնուիլ: Տարեկան բաժնեգին 8 ղրշ: Արտասահման 2 ֆր.:

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՕՐԵԱՅ. — Հայագիտական ուսումնաթերթ, խմբագրութեամբ Վիեննայի Միսիթարեանց: Հրատարակուեցաւ մարտի թիւը: Տարեկան բաժնեգին 15 ֆր.: Հասցէ՝ Vienne (Autriche) VII/2 Mechitharistengasse, 4:

ԲԱԶՄԵՎԷՊ, Ամսադիր Ազգային, Բանասիրական, Դրական, Դիտական. — Հրատարակութիւն Վիեննայի միսիթարեանց, — Հրատարակուեցաւ փետրուարի թիւը: Տարեկան բաժնեգին 10 ֆր.: Rédaction de la revue «Bazmevop», VENISE (Italie), St. Lazare: